



**<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ՅԱ. ԶԱՐՈՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

N107 (ՀՎՀՀ 08606513)

<<19>> սեպտեմբեր 2024 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ք.ՍԵՎԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ 3

ՀԵՌ. (0261) 2-76-50

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սարգսյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ գործող կարգի համաձայն՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարել է մրցույթ՝ <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> (5 դասաժամ), << Մայրենի >> (6 դասաժամ) ևառարկաների ուսուցիչների թափուր տեղերը համալրելու համար:

Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը 2024 թվականի սեպտեմբերի 19-ին հրապարակվել է դպրոցի կայքէջում, ներկայացվել է հրապարակման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելու մարզպետարանի կայքէջում:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 4-ին՝ ժամը 12:00-ին :

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Առդիր 1 թերթ:

Տնօրեն՝ Կ. Գևորգյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» /5 դասաժամ/, «Մայրենի» /6 դասաժամ/ առարկաների թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_ դիմում /Ձև 1/,

_ մեկ լուսանկար 3X4 չափի,

_ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

_ անձը հաստատող փաստաթուղթ

_ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/,

_ ինքնակենսագրություն /Ձև 5/

_ այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/

-- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հոկտեմբերի 4-ին՝ ժամը 12:00 –ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա.Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Սևան, Խաղաղության 3:

Տեղեկությունների համար զանգահարել /094/480052 հեռախոսահամարով: